Հաշվետվություն

2018 թվականի ապրիլի 22-24-ը Ավստրիա (ք. Վիեննա)
գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը՝**
   Ալիկ Հակոբյան
2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Քաղաք Վիեննա, Ավստրիական Հանրապետություն, 22-24 ապրիլի 2018թ.
4. **Հրավիրող կողմը՝**
   Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ)
5. **Գործուղման նպատակը՝**
   Մասնակցել Վիեննայում կայանալիք մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հերթական 18-րդ հանդիպմանը՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր դերակատարությունը. Ինչպես հասնել փոփոխության միասին» խորագրով:
6. **Քննարկված թեմաները՝**
   Կոնֆերանսին շեշտադրվեց մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ռազմավարությունը և արձագանքը, որը հիմնվում է համապարփակ, ինչպես նաև արդյունավետ տեղական, ազգային, տարածաշրջանային, միջազգային ու բազմաբնույթ համագործակցության ամրապնդմամբ:
   Քննարկվեցին մարդու թրաֆիքինգի, հարկադիր աշխատանքի երևույթի դեմ պայքարի ոլորտում կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հարցեր: Հնչեցին առաջարկություններ դասընթացներ կազմակերպելու վերաբերյալ, որոնք կբարձրացնեն աշխատողների, երեխաների իրազեկվածությունը մարդկանց շահագործման, աշխատանքային իրավունքների պաշտպանության համատեքստում: Իրականացվեց ներկայիս համագործակցության մեխանիզմների վերլուծություն:
   Առաջարկվեց մեծ ուշադրություն դարձնել աշխատակիցների պատրաստվածությանը, մասնավորապես՝ տալ փորձնական առաջադրանքներ, ստուգել և ժամանակի ընթացքում կատարելագործել մասնագիտական փորձը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Կայացավ հանդիպում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ԵԱՀԿ հատուկ ներկայացուցիչ և համակարգող Մադինա Ջարբուսինովայի հետ, որի ընթացքում քննարկվեցին հարկադիր աշխատանքի երևույթի դեմ պայքարի կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու, մշտապես համագործակցելու և ինֆորմացված լինելու վերաբերյալ հարցեր:

Տեղի ունեցան հանդիպումներ նաև Ֆրանսիայի արդարադատության նախարարության ներկայացուցիչ Պիեռ Պենոդի, ԱՄԿ ներկայացուցիչ Թոմաս Վիսինգի, ԵԱՀԿ համակարգման հարցերով ավագ խորհրդատու Տատյանա Ռուդենկոյի հետ: Քննարկվեցին աշխատողների պատրաստվածության, մասնագիտական փորձի փոխանակման ուղղությամբ միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հարցեր: Հնչեցին առաջարկություններ՝ խրախուսման եղանակներ ներդնել (օրինակ՝ բանկերի կողմից վարկային արտոնություններ) այն կազմակերպությունների համար, որոնք կպահպանեն աշխատանքային օրենսդրությամբ սահմանված նորմերը, կճանաչվեն որպես տարվա լավագույն տնտեսվարող սուբյեկտներ: Ինչպես նաև խոսվեց ինֆորմացված լինելու մասին, մշտապես համագործակցելու բոլոր այն կառույցների հետ (ոստիկանություն, ՊԵԿ, հասարակական կազմակերպություններ), որոնք բաց են թրաֆիքինգի առումով:

ՀՀ ԱՆ ԱՏՄ ղեկավարի տեղակալ Ալիկ Հակոբյանը ներկայացրեց տեսչական մարմնի 2018 թվականի աշխատանքային ծրագիրը, գործունեության և զարգացման հեռանկարները: Մասնակից երկրների պատվիրակները ևս հանդես եկան իրենց ելույթներով, ներկայացնելով իրենց երկրներում կատարված աշխատանքները:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.**

Օրակարգի 1-ին կետ

Մարդու թրաֆիքինգի, հարկադիր աշխատանքի երևույթի դեմ պայքարի ոլորտում կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հարցեր: Ներկայիս համագործակցության մեխանիզմների վերլուծություն:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.

Կայացած քննարկումը, կարծիքների փոխանակումը հետագա գործունեության վերաբերյալ ընդունել ի գիտություն:

Օրակարգի 2-րդ կետ

Համապարփակ և միասնական գործընկերության ճանապարհին ներկայացված նորարարական մոտեցումների կարևորությունը և նոր գործընկերային հարաբերությունների կառուցումը՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով:

Օրակարգի 3-րդ կետ

Առկա համակարգող մեխանիզմների արդյունավետության, հզորացման հնարավոր ուղիների, լիարժեք և բազմակողմանի համագործակցության ստեղծման վերաբերյալ քննարկումներ: Ռազմավարությունների և պրակտիկայի ներդրման ուղղությամբ առաջարկություններ:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.

Ի գիտություն ընդունել քննարկումները և առաջարկությունները, ստեղծել փորձի փոխանակման արդյունավետ մեխանիզմներ՝ ԵԱՀԿ ուսուցման ծրագրի մասնակիցների բազմապրոֆիլային մոտեցումների հիման վրա:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Վիեննայում կայացած մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հերթական 18-րդ հանդիպման 2018թ. աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում, այդ թվում հարկադիր աշխատանքի երևույթի դեմ պայքարի կանխարգելիչ միջոցառումների իրականացում, համագործակցության մեխանիզմների վերլուծություն:

Գործուղվողը, ստորագրությունը, ամսաթիվը՝

Ալիկ Հակոբյան

03.05.2018թ.